

ՏՈՒԺՈՂԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԶԳԱԼԻ ՎԼԱՍԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԱՏՈՒ ԱՎԱԳՅԱՆ

Քրեական իրավունքի խնդիրները կարող են հաշտություն միայն այն դեպքում, եթե հանցագործությունները բացահայտվեն և հանցագործներին դատապարտելիս խստորեն պահպանվեն սոցիալիստական օրինականության սկզբունքները: Օրինականության պահպանումն ու ամրապնդումը կենսական անհրաժեշտություն է կյանքի բոլոր բնագավառներում և, առաջին հերթին, արդարադատության ճիշտ իրականացման հարցում: «Անհանդուրժելի են օրենքից նահանջելու կամ այն շրջանցելու ամեն տեսակ փորձերը, ինչով էլ դրանք պատճառաբանվեն: Անհանդուրժելի են նաև անձի իրավունքների խախտումները, քաղաքացիների արժանապատվությանը դիպչելը: Մեզ կոմունիստներին, ամենամարդասիրական իդեալների կողմնակիցներին համար դա սկզբունքի հարց է», — նշել է Լ. Ի. Բրեժնևը¹: Այս առումով կարևոր նշանակություն է ստանում հանցագործությունների ճիշտ որակման հարցը: Հանցագործության ճիշտ որակումը՝ դա նրա իրավաբանական, հետևաբար և գիտական, միաժամանակ հասարակական և պետական-իրավական ճիշտ գնահատումն է, հանրորեն վստահավոր այդ արարքի կամ գործունեության բարոյական արժեքավորումը: Այստեղից էլ բխում է այս հարցի կարևորությունը, քանի որ կոնկրետ հանցագործության հանցակազմի նշանների բացահայտումը իրականացվում է կատարված արարքի իրավաբանական վերլուծության միջոցով, գիտական դիալեկտիկական մեթոդով: Հանցագործության ճիշտ որակումը կարևոր նշանակություն ունի նաև անձի իրավունքների ու շահերի դեպքում պահպանման համար: Այդ հարցում թույլ տրված սխալն անխուսափելիորեն հանգեցնում է մարդու իրավունքների ոտնահարմանը, քանի որ անձին անհիմն քրեական պատասխանատվության ենթարկելը կամ պատժելը ոչ այն հոգվածով կամ հոգվածի մասով, որ նախատեսում է օրենսդիրը, համարվում է անձի իրավունքների ու օրինական շահերի ոչ միայն կոպիտ, այլև հանցավոր խախտում: Կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս սովետական օրենսդրության կատարելագործմանը, որի նպատակն է հանցագործությունների դեմ մղվող պայքարը ուժեղացնել, արդյունավետ դարձնել, սոցիալիստական օրինականությունը ամրապնդել:

Միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերը գողությունը, կողոպուտը և խարդախությունը որակյալ դարձնող հատկանիշների շարքն են դասում նաև տուժողին զգալի վնաս պատճառելը: Ակներև է, որ ինչքան զգալի է հանցագործությամբ տուժողին պատճառված գույքային վնասը, այնքան վստահավոր է կատարված ոտնձգությունը, որովհետև դրանով ոչ միայն սեփականատիրոջ նյութական վիճակն է ծանրանում, այլև,

¹ «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 107:

ձեռք բերելով զգալի գույքային արժեքներ, հանցագործը հնարավորություն է ստանում երկար ժամանակ ապրել ուրիշի աշխատանքի հաշվին, վարել պորտաբույծ կյանք:

Ինչպես ՀՍՄՀ 1922 և 1927 թթ. օրենսգրքերով, այնպես էլ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1947 թ. հրամանագրով տուժողին զգալի վնաս պատճառելը չէր գիտվում հանցանքը ծանրացնող հանգամանք: 1958 թ. օրենսդրությամբ այս խնդիրը իրավացիորեն կարգավորվեց, բայց, տվյալ հարցում, մեր կարծիքով, դեռևս կան որոշ թերություններ: Նախ՝ մի շարք հանցակազմերի մեջ նշելով վերոհիշյալ հատկանիշը, օրենսդիրը միաժամանակ չի բացահայտում դրա բովանդակությունը և չի նշում այն նվազագույն չափը, որից բարձրը պետք է դիտել որպես զգալի վնաս: Տուժողին պատճառված գույքային վնասի զգալի համարելը կամ չհամարելը թողնվել է իրավապաշտպան մարմինների հայեցողությանը²: Քննչական և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ դատաքննչական մարմինները նշված հանգամանքը շատ դեպքերում պատշաճ ուշադրության չեն արժանացնում կամ էլ ճիշտ չեն կողմնորոշվում: Դա հանգեցնում է այն բանին, որ զգալի չափերով վնաս պատճառած հափշտակումները որակվում են որպես ոչ ծանրացնող հանգամանքներում կատարված հափշտակումներ:

Անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունները գույքային հանցագործություններ են. դրա համար էլ, խոսելով տուժողին պատճառված վնասի մասին, օրենքը փաստորեն նկատի է ունենում միայն նյութական, գույքային բնույթի ունեցող վնասը: Մինչդեռ իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվել, թե պատճառված վնասի որոշման ժամանակ պետք է հաշվի առնել և այլ՝ այդ թվում բարոյական վնասը: Այսպես, Վ. Ա. Վլադիմիրովը գրում է. «Առանձին դեպքերում զգալի վնաս կարող է համարվել նաև որևէ մասունքի, պատմական արժեքների և այլնի հափշտակումը, անգամ եթե դրամական արտահայտությամբ այդ վնասը առանձնապես մեծ չէ: Այս դեպքում պատճառված բարոյական վնասը կարող է լինել անշափ մեծ, քան նյութականը, որը չի կարելի հաշվի չառնել կատարված հանցագործության որակման ժամանակ»³: Մենք համամիտ չենք այս տեսակետի հետ, որովհետև որքան էլ ծանր լինեն տուժողի բարոյական ապրումները, որից հափշտակել են, ասենք, ընտանեկան մասունքը, այդ բարոյական վնասը չի կարող հավասարվել գույքային, շահադիտական հանցագործությունների հետևանքով առաջացող նյութական վնասին:

Տուժողին պատճառված գույքային վնասի չափը որոշելու համար ամենից առաջ պետք է հաշվի առնել հափշտակված իրի դրամական արժեքը՝ պետական մանրածախ գներով (ոսկյա առարկաների, ավտոմեքենայի, թանկարժեք մետաղների, քարերի և այլնի հափշտակության ժամանակ), որովհետև ման-

² Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ տուժողին զգալի վնաս պատճառելու հատկանիշի 19,2 տոկոսը որակյալ չի դիտվել:

³ В. А. Владимиров, Преступления против личной собственности граждан по уголовному законодательству союзных республик («Советское государство и право», 1962, № 8, с. 74).

րաժախ գները, կայուն լինելով հանդերձ, ավելի ստույգ են արտահայտում այն հանրորեն օգտակար աշխատանքի քանակն ու որակը, որ ներդրված է տվյալ իրի, առարկայի կամ նյութի արտադրության համար: Եթե հափշտակված գույքի մանրածախ գինը հայտնի չէ, ապա նրա արժեքը որոշվում է այն նորմատիվ ակտերի պարզաբանումներին համապատասխան, որոնցով սահմանված է վնասը հաշվելու կոնկրետ կարգը: Մեծածախ և մթերման գները վնասի չափը չեն կարող արտահայտել: Հետևաբար, չեն կարող օգտագործվել հաշվարկման ժամանակ: Հափշտակված գույքի մանրածախ գնի և հատուկ նորմատիվ ակտի բացակայության ժամանակ նրա արժեքը կարելի է որոշել համանման ապրանքների մեծածախ գների համապատասխանությամբ, որը պետք է պարզել փորձագետի ելրակացությամբ: Նման պրակտիկան կիրառելի է, օրինակ, կերպարվեստի ստեղծագործությունների, պատմական արժեք ներկայացնող առարկաների և այլնի հափշտակության ժամանակ: Մեր կարծիքով, տուժողին պատճառված գույքային վնասի զգալի լինելու ելակետ պետք է ընդունել 100 ռուբլին և դրանից բարձր գումարը: Նման առաջարկության հանգեցնում են հետևյալ դատողությունները: ՀՍՍՀ քրեական օրենսգրքի հավելվածում նախատեսված ցուցակի 6-րդ կետի համաձայն, դատարանի դատավճռով բռնագրավման ենթակա չեն սննդամթերքը և փողը՝ դատապարտյալի մեկ ամսվա աշխատավարձի չափով, բայց ոչ պակաս հարյուր ռուբլուց: Եթե դատավճռի կայացման պահին դատապարտյալը չի աշխատել, ապա դատապարտյալի ընտանիքի և նրա խնամքի տակ գտնված անձանց սննդամթերքն ու դրամը ենթակա չեն բռնագրավման առնվազն հարյուր ռուբլի ընդհանուր գումարով: Հետևաբար, օրենքը ելնում է այն հանգամանքից, որ 100 ռուբլին այն նվազագույն չափն է, որ կարող է ապահովել տուժողի ու նրա ընտանիքի նորմալ գոյությունը, և այդ գումարի արժողությամբ գույքի կորուստը զգալի վնաս է տուժողի և նրա ընտանիքի համար:

Իրավաբանական գրականության մեջ տուժողին պատճառված զգալի վնասի չափի և նրա արժեքային արտահայտության հարցի մասին գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Որոշ հեղինակներ ընդհանրապես խուսափել են գույքային վնասի որևէ նվազագույն չափ նշելուց, տվյալ հարցում որոշում կայացնելը թողնելով իրավապաշտպան օրգաններին: Այսպես, Ա. Ա. Պրոնտկովսկին գրում է, թե «...գողությանը տուժողին զգալի վնաս պատճառելու հարցը պետք է որոշել կոնկրետ պայմաններում տուժողին պատճառված վնասի գնահատմամբ»⁴: Ի. Գ. Ֆիլանովսկին ևս նույնանման կարծիքի է: «Տուժողին պատճառված վնասի զգալի լինելը համարվում է փաստական հանգամանքների հարց»,— գրում է նա⁵: Պարզ է, որ նման անորոշ, ոչ կոնկրետ հանձնարարականները չեն կարող բավարարել դատական պրակտիկային: Այդ է պատճառը, որ տուժողին պատճառված վնասի զգալի կամ ոչ զգալի լինելը որոշելու համար քննչական և դատական մարմինները դժվարությունների առաջ են կանգնում: Քննվող հարցը չի լուծվել ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի, ինչպես նաև միութենական հանրապետությունների բարձրագույն դատական մարմինների կողմից: Այնուամենայնիվ, մի շարք հեղինակներ ավել-

⁴ «Курс советского уголовного права», т. V, М., 1971, с. 320.

⁵ «Курс советского уголовного права», т. 3, Л., 1973, с. 774.

լի կոնկրետ առաջարկներ են արել: Այսպես, Վ. Ա. Վլադիմիրովը նախ առաջարկել է որպես կողմնորոշիչ ելակետ ընդունել հափշտակված իրի 100 ուրբլի արժեքը⁶, սակայն հետագայում այդ թիվը հասցրել է 150—200 ուրբլու⁷:

Գ. Ն. Բորզենկովը առաջարկել է տուժողին պատճառված զգալի վնասի նվազագույն սահմանը համարել 100—300 ուրբլու գումարը⁸:

ՀՍՍՀ-ում կատարվող գույքային հանցագործությունների դեմ պայքարի պրակտիկայի ուսումնասիրությունը և վերը շարադրվածը համոզում են, որ, այնուամենայնիվ, տուժողին պատճառված զգալի վնասի չափը որոշելու համար պետք է ելակետ ընդունել 100 ուրբլին և դրանից բարձր գումարը, իսկ առանձին դեպքերում՝ նաև 100 ուրբլուց ցածրը, որովհետև զգալի վնասի հասկացության տակ պետք է դիտել ամբողջ գույքի կամ նրա զգալի մասի, կամ էլ՝ առավել թանկարժեք իրերի, ինչպես նաև ոչ մեծ արժեք ներկայացնող, բայց տուժողի համար նյութական էական դժվարություններ առաջացնող իրերի հափշտակումը: Ուրեմն, մի շարք դեպքերում տուժողին զգալի վնաս կարող է պատճառվել նաև 100 ուրբլուց ցածր գումարի դեպքում, երբ դրանով տուժողի համար ստեղծվում է նյութական ծանր վիճակ: Այս տրամաբանությամբ պետք է բուժման, գործուղման, տուրիստական ուղևորության մեջ գտնվող անձանցից կատարված գողությունը, անկախ այն բանից, որ պատճառված վնասը 100 ուրբլուց պակաս է, դիտել որպես զգալի վնաս:

Իրավաբանական դրականության մեջ նշվում է, որ, բացի հափշտակվածի դրամական արժեքից, տուժողին պատճառված զգալի վնասի որոշման մյուս չափանիշը պետք է համարել տուժողի գույքային վիճակը: «Դրա համար էլ բոլոր այն դեպքերում, երբ հափշտակված գույքի դրամական արժեքն ինքնին չի վկայում զգալի վնասի չափը, ապա դատարանը պետք է այն չափակցի տուժողի գույքային վիճակով»⁹, Անվիճելի է, որ սոցիալիզմի պայմաններում քաղաքացիների նյութական վիճակը հավասար լինել չի կարող, որովհետև հասարակական արտադրանքի բաշխումը կատարվում է ոչ թե ըստ պահանջմունքի, այլ ըստ աշխատանքի, այդ աշխատանքի քանակով ու որակով, աշխատանքային որակավորմամբ և այլ գործոններով: Անգամ հավասար աշխատանքային եկամուտների դեպքում տարբեր քաղաքացիների գույքային վիճակը մնում է անհավասար՝ կախված նրանց խնամքի տակ գտնվող անձանց քանակից, ընտանիքի անդամների առողջական վիճակից և այլն: Դրա համար էլ տուժողին պատճառված զգալի վնասի հարցը լուծելիս պետք է ելնել տուժողի գույքային վիճակից: Բայց համընդհանուր ճանաչում գտած այս տեսակետը, մեր կարծիքով, չի կարող լրիվ բավարարել դատական պրակտիկային և այն պետք է կիրառել մասնակիորեն, որոշ վերապահումներով. նախ՝ դատարանի համար դժվար, երբեմն էլ՝ անհնար է այդ հարցի լուծումը, քանի որ տուժողը կարող է խնայդրամարկղում ուրիշի անունով ունենալ խոշոր գումար կամ ավտոմեքենա, որոնց պարզումը դժվարությունների և ժամանակի հետ է կապված:

⁶ В. А. Владимиров, В. И. Холостов, Ответственность за грабеж и личность грабителя, М., 1976, с. 203.

⁷ В. А. Владимиров, Квалификация похищений личного имущества, М., 1971, с. 181.

⁸ Г. Н. Борзенков, Оценка ущерба при посягательствах на личную собственность («Советская юстиция», 1976, № 1, с. 6).

⁹ В. В. Еракси, Ответственность за грабеж, М., 1972, с. 67.

Մյուս կողմից՝ այդ խնդիրը միշտ կլուծվի հարաբերականորեն, ենթադրաբար, որովհետև հաշվի առնել տուժողի տնային կահույքը, խնայդրամարկղում ունեցած դրամը, պաշտոնը, աշխատանքի բնույթը, անձնական օգտագործման ավտոմեքենան և դրանք համեմատել հափշտակված իրի արժեքի հետ ու որոշել նրան պատճառված զգալի վնասի չափը, ճիշտ չի լինի: Մի՞թե արդարացի կլինի բարձր, ասենք 500 ու աշխատավարձ ստացողից (թեկուզ նա լինի միայնակ) 300 ու գողությունը համարել «հասարակ» այն դեպքում, երբ, արդի պայմաններում, հափշտակողն իր գոյությունը պահպանելու համար չէ, որ գողանում է, այլ շույլ և պարագիտային կյանք վարելու նվ, վերջապես, վերը նշվածը հանցագործներն անուղղակիորեն կարող են մեկնաբանել յուրովի՝ «հափշտակիր նյութապես ապահովված քաղաքացիներից, դատարանը, հաշվի առնելով նրա նյութական վիճակը, քո հափշտակածը (300 կամ 500 ու) զգալի վնաս չի դիտի»։ Ժամանակն է ավելի նեղացնել տուժողին պատճառված զգալի վնասի հասկացությունը շրջանակները և որոշ չափով կոնկրետացնել այս կարևոր հարցը: Դրա համար անհրաժեշտ է վերացնել տուժողի գույքային լավ և վատ վիճակ հասկացությունների տարբերակումը, որպեսզի, անկախ նրա աշխատավարձի չափից, աշխատանքի բնույթից, ընտանիքի անդամների թվից և այլն, պատճառված վնասը զգալի համարվի 100 ռուբլի և ավելի գումարի, ինչպես նաև՝ 100 ռուբլուց պակասի հափշտակության դեպքում, եթե տուժողի աշխատավարձը 100 ռուբլուց ցածր է կամ նա թոշակառու է, կամ էլ գտնվում է գործուղման մեջ և այլն: Այսինքն՝ երբ հափշտակության հետևանքով տուժողի համար ստեղծվում են նյութական ռեալ դժվարություններ: Ելնելով սահմանադրական սկզբունքներից և ՄՍՀՄ քաղաքացիների շահերից, հարցի նման կարգավորումը արդարացի կլինի քրեաիրավական պայքարի և պատժի արդյունավետության, ինչպես նաև սոցիալիստական օրինականության ապահովման տեսանկյունից:

Քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կատարման ժամանակ մեղավորը, հաճախ, գործում է անորոշ, չկոնկրետացված դիտավորությամբ: Գողը, տրանսպորտում մտնելով ուղևորի գրպանը, չի կարող իմանալ գրպանում խոշոր գումար կա, թե ոչ: Անորոշ դիտավորությամբ կատարված հանցագործությունը պետք է որակվի՝ ելնելով պատճառված վնասի չափից: Սակայն սա չի նշանակում, որ քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունները չեն կարող կոնկրետացված, նախապես որոշված դիտավորությամբ լինել, երբ մեղավորը նպատակադրվում է հափշտակել խոշոր գումար կամ թանկարժեք իրեր:

Կատարված հանցագործության սուբյեկտիվ կողմի ճիշտ որոշումը, մասնավորապես դիտավորության բնույթն ու ուղղվածությունը, կարևոր նշանակություն ունեն քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված հանցափորձի որակման համար: Թանկարժեք գույք կամ խոշոր գումար հափշտակելու դիտավորությամբ հանցագործություն կատարելու փորձը պետք է դիտել որպես տուժողին զգալի վնաս պատճառելու, գողության կամ այլ հանցագործության հանցափորձ: Այսպիսի որակում, մեր կարծիքով, հանցագործին պետք է տրվի ոչ միայն այն դեպքում, երբ նրան չի հաջողվել տիրել ուրիշի գույքին, այլև այն դեպքում, երբ նրան հաջողվել է հափշտակել ոչ մեծ գումարի գույք, սակայն տվյալ իրադրության մեջ մե-

ղավորի մտադրությունը՝ զգալի վնաս պատճառել տուժողին, չի իրագործվել իրենից անկախ պատճառներով: Այս կարծիքը մասնավորապես պաշտպանվում է ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1972 թ. հուլիսի 11-ի որոշմամբ, որտեղ նշվում է, «...եթե հափշտակության ժամանակ մեղավորի դիտավորությունն ուղղված է եղել հափշտակելու զգալի խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի գույք և այն չի իրականացվել մեղավորից անկախ պատճառներով, ապա արարքը պետք է որակել որպես զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի հափշտակության փորձ, անկախ փաստորեն հափշտակվածի քանակից»¹⁰:

Ինչպես ՀՍՍՀ, այնպես էլ միութենական մյուս հանրապետությունների քրեական օրենսդրությունների մեջ լուրջ թերություն է այն, որ քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կատարման ժամանակ որպես ծանրացնող հանգամանք չի նախատեսվում տուժողին խոշոր չափերով վնաս պատճառելը: Քաղաքացիների անձնական սեփականության քրեաիրավական պաշտպանության գործում և ՀՍՍՀ քրեական օրենսդրության կատարելագործման ուղղությամբ կարևոր երևույթ էր ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1980 թ. հոկտեմբերի 29-ի «Սոցիալիստական սեփականության և քաղաքացիների անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունն ուժեղացնելու մասին»¹¹ հրամանագիրը, որը էական լրացումներ մտցրեց մինչ այդ գործող քրեական օրենսդրության մեջ:

Առանձնապես ծանր հետևանքներ առաջացնող հանցագործությունների և առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստների նկատմամբ կարևոր նշանակություն ունի օրենսդրի հետևողականությունը երկարատև ազատազրկում սահմանելու հարցում: Սակայն ՀՍՍՀ քրեական օրենսգրքում քաղաքացիների անձնական գույքի հափշտակության տարբեր եղանակների համար սահմանված սանկցիաներում կան չպատճառաբանվող տարբերություններ: Տուժողին զգալի վնաս հասցնելու համար ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 (գողություն) և 144 (կողոպուտ) հոդվածների 2-րդ մասերով նախատեսվում է ազատազրկում երկուսից մինչև վեց տարի ժամանակով: Միանգամայն այլ լուծում է տրված խարդախությանը. խարդախությամբ տուժողին զգալի վնաս հասցնելու համար ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 148 հոդվածի 3-րդ մասի համաձայն նախատեսված է ազատազրկում երեքից մինչև տասը տարի: Ուրեմն, գողության և կողոպուտի եղանակներով տուժողին զգալի վնաս պատճառելու համար սահմանվել է ազատազրկում մինչև վեց տարի, իսկ խարդախության եղանակով նույնպիսի վնաս պատճառելու դեպքում՝ մինչև տասը տարի ժամանակով: Մինչդեռ գողությունն ու կողոպուտը սկզբունքորեն ավելի վտանգավոր են, քան խարդախությունը: Խարդախության դեպքում առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կատարած հափշտակությունը հավասարեցվել է

¹⁰ «Сборник постановлений Пленума Верховного Суда СССР 1924—1977», ч. II, с. 159.

¹¹ «ՀՍՍՀ Գերագույն սովետի տեղեկագիր», 1980, № 20, էջ 259—260.

նույնպիսի եղանակով հափշտակությամբ զգալի վնաս պատճառելուն, իսկ գողության և կողոպուտի դեպքում՝ ոչ:

Հիմք ընդունելով վերը նշված փաստարկները, կարծում ենք, ճիշտ կլինի, եթե անձնական գույքի բոլոր եղանակներով կատարվող հափշտակությունների համար սահմանված սանկցիաները վերանայվեն քաղաքացիներին խոշոր վնաս պատճառելու և առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստների կողմից համապատասխան եղանակով հափշտակություն կատարելու հանգամանքների միջև հավասարության նշան դնելու տեսանկյունով: Այսինքն՝ ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 և 144 հոդվածների 3-րդ մասերը լրացվեն խոշոր չափերով կատարված գողության և կողոպուտի հավելվածով: Այգպիսի վնասի չափը կարող է ընդունվել 1000 ռուբլին: Առաջարկվող օրենսդրական հավելվածը, անշուշտ, կնպաստեր քաղաքացիների անձնական գույքի հափշտակումների դեմ պայքարի արդյունավետությանը:

Ըստ նշված հրամանագրի, քաղաքացու բնակարանից գողություն կատարողը պետք է պատասխանատվության ենթարկվի ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 3-րդ մասով, որը նախատեսում է ազատազրկում հինգից տասը տարի: Մինչդեռ տուժողի նյութական վիճակը ծանրանում է ոչ թե նրա բնակարանից գողություն կատարվելու, այլ մեծ գումարներ և արժեքներ հափշտակելու հետևանքով: Ասենք՝ մեկը մտել է հարևանի բնակարանը և հափշտակել 100 ռուբլու արժողությամբ իրեր, իսկ մյուսը, տեխնիկական միջոցների գործադրմամբ, 1000 ռուբլու ինչպե՞ս վարվել. երկու դեպքում էլ պատիժը հինգից տասը տարի է: Հարցի նման լուծումը վտանգավոր է իրավագիտակցության ձևավորման տեսանկյունից:

Ակնհայտ է, որ կողոպուտը հանրության համար ավելի վտանգավոր է, քան գողությունը, քանի որ այն կատարվում է բացահայտ և հաճախ զուգորդվում է բռնությամբ: Սակայն պարզ չէ, թե օրենսդիրը ինչ հանգամանքներից ելնելով է ուժեղացրել պատասխանատվությունը գողության համար՝ միաժամանակ անփոփոխ թողնելով ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 144 հոդվածի 2-րդ մասի միևնույնը և մաքսիմում պատժաչափը: Երկու դեպքում էլ նախատեսվում է ազատազրկում երկուսից մինչև վեց տարի: Այս առումով նույնպես օրենքը հետագա լրացման կարիք է զգում:

Վերջապես հարց է առաջանում, թե՞ հյուրանոցից, հանգստյան տներից, վրանից (ասենք մեղվապահի վրանից հափշտակել են 100 կգ մեղր կամ գոմից ուշաբ) և նման այլ վայրերից կատարված գողությունները պե՞տք է արդյոք հավասարեցվեն բնակարանից կատարվածներին, թե՞ ոչ: Կամ ինչպիսի՞ անձանց պետք է համարել հանրօգուտ աշխատանքից խուսափող, ո՞րն է դրա չափանիշը: Ինչպես տեսնում ենք, դատական պրակտիկայում ծագող հարցերը շատ են, իսկ դրանց պատասխանները դեռևս չկան:

Սոցիալիստական օրինականության խախտումներ թույլ չտալու և հանցագործությունները ճիշտ որակելու համար անհրաժեշտ է պաշտոնական պարզաբանում տալ նշված հարցերին, իսկ դա սահմանադրությամբ իրավասու են կատարել ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը կամ, ղեկավար պարզաբանումների կարգով, ՀՍՍՀ Գերագույն դատարանի պլենումը:

ПОНЯТИЕ ЗНАЧИТЕЛЬНОГО УЩЕРБА, ПРИЧИНЕННОГО ПОТЕРПЕВШЕМУ

АНАТОЛИЙ АВАКЯН

Р е з ю м е

В теоретической литературе до настоящего времени в достаточной мере не раскрыты сущность и критерии определения того размера имущественного ущерба, который служил бы основанием для отнесения кражи к квалифицирующим, т. е. совершенным в значительных размерах. В качестве стоимостного показателя значительности причиненного имущественного ущерба следует принять стоимость похищенного на сумму от 100 рублей и выше, поскольку эта сумма составляет тот минимум, который способен обеспечить более или менее нормальное существование потерпевшего и вместе с тем потеря денег или имущества на такую сумму будет ощущаться им как значительная.

В целях более четкой дифференциации ответственности и индивидуализации наказания предлагается дополнить перечень особо отягчающих обстоятельств кражи (ч. 3 ст. 143 УК) указанием на ее совершение с причинением потерпевшему особо значительного (крупного) ущерба. Таким размером ущерба могла бы быть признана стоимость имущества на сумму 1000 руб. Предлагаемая законодательная новелла, несомненно, способствовала бы повышению эффективности борьбы с наиболее опасными видами краж и охране личной собственности граждан от преступных посягательств.